



Կ Ա Ն Ա Ն Ց ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությանը կանայք»
լրատուի հավելված

ԱՊՐԻԼ-ՕԳՈՍՏՈՍ, 2011, №8-9

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

ՈՒՂՂՎԱԾ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՄՂՍԱՆԸ

ԵՎ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

2011 թ. ապրիլի 1-ին Երևանում 100-ից ավելի լիդերների և ակտիվիստների մասնակցությամբ անցկացվեց «Կանանց մրավոր ներուժն ի նպաստ ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման» հանրապետական ակցիայի եզրափակիչ փուլը՝ ամփոփիչ համաժողովը, որի նպատակն էր Համալսարանական կրթությանը կանանց ասոցիացիայի 15 տարվա գործունեության ներկայացման միջոցով հանրությանը տեղեկացնել հասարակության զարգացման գործընթացներում բարչրագույն կրթությանը կանանց ունեցած ներդրման մասին:

Յանրապետական համաժողովին նախորդեցին մարզային համաժողովներ Գյումրիում, Վանաձորում, Արտաշատում, Հրազդանում, Աշտարակում, **ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆԵՐ՝** Աբովյանում, Նոր Հաճընում, Եղվարդում, Չարենցավանում, Մասիսում, Վեդիում, Արարատում, Էջմիածնում, Սևանում, Ստեփանավանում, Սպիտակում, Ալավերդիում, Տաշիրում, Արթիկում, Ախուրյանում, Մարալիկում, Թալինում, Դիլիջանում:

Հանրապետական համաժողովի աշխատանքներին մասնակցեցին Ասոցիացիայի 32 մասնաճյուղերի նախագահները, «Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնություն», «Կանանց հանրապետական խորհուրդ», «Քաղաքացիական հասարակության տարածքային զարգացման ինստիտուտ», «Աջակցություն իրավական պետությանը», «Հոգևոր Հայաստան», «Համայնք և երիտասարդություն», «ՊրոՄեդիա-Գենդեր», «Սուրբ Սանդուխտ կույսի անվան տիկնանց միություն», «Հայ ժողովրդավարական ֆորում», «Գորիսի կանանց ռեսուրսային կենտրոն», «Հայտուր» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Համաժողովի հյուրերի կազմում էին ՀՀ նախարարությունների, Հայաստանի Հանրապետական, «Բարգավաճ Հայաստան», ՀՀԿ կուսակցությունների ներկայացուցիչները, ՀՀ Ազգային ժողովի պատ-

գամավորներ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի և այլ միջազգային կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Համաժողովն անցկացվել է «**Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն**» ծրագրի շրջանակներում «Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

Համաժողովի աշխատանքը բացեց Ասոցիացիայի նախագահ Ջեմմա Հասարայանը: Նա ներկայացրեց 15 տարիների գործունեությունը, Ասոցիացիայի ստեղծած կառույցները և դրանց շրջանակներում իրականացված ծրագրերը:

Համաժողովի մասնակիցներին գործունեության 15-ամյակի կապակցությամբ ողջունեցին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի տնտեսական հարցերի և զարգացման մշտական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր **Հերմինե Նաղդալյանը**, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ **Քարել Հոֆսթրան**, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար **Ֆիլարետ Բերիկյանը**, «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի տնօրենի տեղակալ **Դավիթ Ամիրյանը**: Բարձր գնահատելով Ասոցիացիայի ներդրումը Հա-



յաստանում կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցության ակտիվացման, գենդերային խտրականության և գենդերային կարծրատիպերի հաղթահարման, հասարակության մեջ կանանց կարգավիճակի բարձրացման գործում՝ նրանք հաջողություն մաղթեցին Ասոցիացիային և նրա կառույցներին հետագա նախաձեռնություններում:

Համաժողովի առաջին հիմնախնդրի («15 տարի քաղաքացիական հասարակության ինստի-



տուտների համակազմում. Ասոցիացիայի գործունեության առաջնահերթ ուղղությունների ներկայացում») շրջանակներում Ասոցիացիայի վարչության անդամ, «Պրոմեդիա-Գենդեր» ՀԿ-ի նախագահ Թամարա Հովնաթանյանը, Ասոցիացիայի փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Ջաքարյանը և Ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի համադասող, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի կադրերի վերապատրաստման և մասնագիտական ուսուցման բաժնի պետ Նարինե Դավթյանը ներկայացրեցին Ասոցիացիայի ժողովրդավարության և խաղաղության, Գենդերային հետազոտությունների կենտրոնների և կանանց լիդերության դպրոցի գործունեությունը: Մասնավորապես, նշվեցին անցկացված կլոր սեղան-քննարկումները, միջազգային խորհրդաժողովները, հետազոտությունները, կրթական համակարգում գենդերային կրթության ներդրման աշխատանքները, անցկացված գենդերային դպրոցները, ուսանողական խորհրդաժողովները: Ներկայացվեցին կանանց լիդերության դպրոցի ստեղծման պատմությունը, դրա նպատակները և արդյունքները:

Համաժողովի երկրորդ հիմնախնդրի («15 տարի քաղաքացիական հասարակության ինստիտուտների համակազմում. Ասոցիացիայի նվաճումները և փորձը, լուծված խնդիրները և առա-

ջիկա տարիների ռազմավարությունը») քննարկման ընթացքում տեղի ունեցավ «Կանանց մտավոր ներուժն ի նպաստ ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման» հանրապետական ակցիայի և առաջնահերթ ոլորտներում Ասոցիացիայի գործունեության ամփոփում, մտքերի փոխանակում, առաջարկություններ արվեցին առաջիկա տարիների մարտավարության վերաբերյալ:

Համաժողովի ընթացքում հնչեցին բազմաթիվ շնորհավորանքներ Ասոցիացիայի 15-ամյա գործունեության կապակցությամբ Ասոցիացիայի մասնաճյուղերի, այլ հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների կողմից:

Ելույթ ունեցան ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ռուզաննա Առաքելյանը և Լարիսա Ալավերդյանը, ՀՀ Հանրային խորհրդի Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ, ԵՊՀ դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի ղեկավար Ջինա Սարգիզովան, Ասոցիացիայի Գյումրու, Վանաձորի և Թալինի մասնաճյուղերի նախագահներ Ելենա Վարդանյանը, Սոֆյա Բաբայանը և Անահիտ Հարությունյանը, Քաղաքացիական նախաձեռնությունների Շիրակի և Արարատի մարզային կենտրոնների ղեկավարներ Լիլիթ Ասոյանը և Անահիտ Խաչատրյանը, կանանց հանրապետական խորհրդի նախագահ Աիդա Թոփուզյանը, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող Վլադիմիր Օսիպովը, Ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի 27-րդ հոսքի ունկնդիր, «Շանթ» հեռուստաընկերության լրագրող Արևիկ Հակոբյանը:

Ամփոփելով Ասոցիացիայի 15 տարիների գործունեությունը առաջնահերթ ուղղություններում, զնահատելով քաղաքացիական հասարակության կայացման և զուգակշռված ժողովրդավարության ձևավորման գործընթացներում կանանց դերի բարձրացման և լիդերության ներուժի համախմբման գործում ձեռք բերած նվաճումները և փորձը, ինչպես նաև բացահայտելով չլուծված հիմնախնդիրները՝ համաժողովի մասնակիցները քննարկեցին Ասոցիացիայի և նրա կառույցների առաջիկա տարիների գործունեության հիմնական ուղղությունները:



ԱՍՈՑԻԱՅԻԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԵՏ ՀԱՆԳԵՍ Է ԳԱԼԻՍ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

2011 թ. մայիսի 3-ին Երևանում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան անցկացրեց կլոր սեղան «**ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ որպես օրենսդիր իշխանությունում և Վեդական ինքնակառավարման մարմիններում զենդերային հավասարակշռության հասնելու գործիք**» թեմայով, որի աշխատանքներին մասնակցեցին 60 ներկայացուցիչներ՝ Ասոցիացիայի վարչության անդամներ, Երևանի Կենտրոն, Էրեբունի, Աջափնյակ և Նոր Նորք համայնքների, Շիրակի, Լոռու, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի մարզերում գործող 16 մասնաճյուղերի ղեկավարներ, 11 այլ հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների լիդերներ և ակտիվիստներ:

Կլոր սեղանին մասնակցեցին ՀՀ Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Դավիթ Զարությունյանը** և նախագահի տեղակալ **Արտյուշ Շահբազյանը**, գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Արտակ Դավթյանը**, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Արծվիկ Մինասյանը**, ԱԺ պատգամավոր, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վերաժողովի տնտեսական հարցերի և զարգացման մշտական հանձնաժողովի նախագահ **Յերմինե Նաղդալյանը**, ԱԺ պատգամավոր, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի պատվիրակության անդամ **Գագիկ Բաղդասարյանը**, ինչպես նաև Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակի, «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ **Ջենմա Հասրաթյանը** բացման խոսքում նշեց, որ Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակներում, քաղաքացիական հասարակության ձևավորմանը համընթաց, հետևողական աշխատանք է տարվում օրենսդրական դաշտի բարելավման ուղղությամբ:

Հանրային լայն արձագանք է ստացել Ազգային ժողովում քննարկված և առաջին ընթերցմամբ ըն-

դունված ՀՀ ընտրական օրենսգրքի նոր նախագիծը:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ոչ մի քաղաքական գործընթաց այնքան ազդեցություն չի ունենում ժողովրդավության խորացման, քաղաքացիների ինքնագիտակցության և պատասխանատվության բարձրացման վրա, որքան ընտրական գործընթացները:



Քաղաքացիական հասարակության ինստիտուտները, այդ թվում կանանց հասարակական կազմակերպությունները ոչ միայն իրենց մասնակցությունն են բերում այդ գործընթացներին, այլև գիտակցում են պատասխանատվությունը մասնակցային ժողովրդավարության հետագա ընդլայնման գործում:

Կլոր սեղանի նպատակն էր քննարկել ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի նոր նախագիծը՝ մասնավորապես շեշտը դնելով այն հոդվածների վրա, որոնք վերաբերում են օրենսդիր



իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններում գեներերային հավասարակշռության ապահովմանը:

Քննարկման արդյունքում ընդունված առաջարկությունները ներկայացվեցին ՀՀ Ազգային ժողովում:



Ելույթներով հանդես եկան Ասոցիացիայի Քաղաքացիական նախաձեռնությունների Լոռու մարզային կենտրոնի ղեկավար **Արմենուհի Կյուրեղյանը**, Կանանց հանրապետական խորհրդի նախագահ **Աիդա Թովուզյանը**, Ասոցիացիայի Քաղաքացիական նախաձեռնությունների Շիրակի մարզային կենտրոնի ղեկավար **Լիլիթ Ասոյանը**, Ասոցիացիայի փոխնախագահ **Լիլիթ Զաքարյանը**, Ասոցիացիայի Քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի ղեկավար **Անահիտ Աղոյանը**, «Սուրբ Սանդուխտ կույսի անվան տիկնանց միություն» ՀԿ-ի նախագահ **Արտեմիս Լեփեջյանը**, ՀՀ Հանրային խորհրդի գեներերային հարցերի և ժողովրդագրության հանձնաժողովի նախագահ, Ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի նախագահ **Ելենա Վարդանյանը**, Պետական կառավարման ակադեմիայի դասախոս **Թամարա Գևորգյանը**, «Պրոմեդիա-Գեներ» ՀԿ-ի նախագահ **Թամարա Հովնաթանյանը**, Հայաստանի հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի համանախագահ **Նատալյա Մարտիրոսյանը**, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Արտակ Դավթյանը**, ՀՀ ԱԺ պատգամավոր, Եվրոպայի խորհրդի

խորհրդարանական վերաժողովի տնտեսական հարցերի և զարգացման մշտական հանձնաժողովի նախագահ **Չերմինե Նաղդալյանը**, ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Արծվիկ Մինասյանը**, ՀՀ Հանրային խորհրդի անդամ, ԵՊՀ դասախոս **Հովհաննես Հովհաննիսյանը**, քաղաքացի **Կարեն Վարդանյանը**, ՀՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Արտյուշ Շահբազյանը**:

Ելույթ ունեցողներն անդրադարձան ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի այն հոդվածներին, որոնք վերաբերում են ՀՀ Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրական ցուցակներում կանանց համար սահմանված քվոտաներին, բոլոր

մակարդակների ընտրական հանձնաժողովների և դրանց ղեկավարների գեներերային կազմին, ընտրացուցակների հրապարակայնությանը, դիտորդների ուսուցման և թեստավորման հարցերին և այլն:

Ստրբերի փոխանակումն ամփոփեց և օրենսգրքի՝ առաջին ընթերցմամբ ընդունված խնդրահարույց հոդվածները մեկնաբանեց ՀՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, օրինագիծը մշակող հանձնաժողովի ղեկավար Դավիթ Հարությունյանը:



Կլոր սեղանի մասնակիցները միաձայն որոշեցին առաջարկությունները ներկայացնել ՀՀ Ազգային ժողով:



ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ պարոն Գավիթ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան ներկայացնում է «ՀՀ ընտրական օրենսգիրքը՝ որպես օրենսդիր իշխանությունում և տեղական ինքնակառավարման մարմիններում գեներացիոն հավասարակշռության հասնելու գործիք» կլոր սեղանի մասնակիցների՝ Ասոցիացիայի վարչության անդամների, մասնաճյուղերի ղեկավարների և այլ հասարակական կազմակերպությունների ղեկավարների կողմից ստորագրված առաջարկությունները ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ:

Յոդված 11. Ընտրողների ցուցակների մատչելիությունը

1-ին կետը՝ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում, կալանավորված անձանց պահելու վայրերում կազմվող, ինչպես նաև ընտրողների կողմից ստորագրված ցուցակների, ազատ է ծանոթության համար: Ընտրողների կողմից ստորագրված ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից պատճեններ չեն հանվում»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում, կալանավորված անձանց պահելու վայրերում կազմվող ցուցակների, ազատ է ծանոթության համար: **Ընտրողների կողմից ստորագրված ցուցակների պարձենները ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո փակցվում են տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում: Ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների դադարեցման օրը»:**

Յոդված 40. Կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորելու կարգը

7-րդ կետը՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի նախագահի տեղակալին և հանձնաժողովի քարտուղարին ընտրում է հանձնաժողովն իր կազմից՝ հանձնաժողովի առաջին նիստում»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, հանձնաժողովի նախագահի տեղակալին և հանձնաժողովի քարտուղարին ընտրում է

հանձնաժողովն իր կազմից՝ հանձնաժողովի առաջին նիստում: **Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ղեկավարներից առնվազն մեկը պետք է լինի կին»:**

Յոդված 41. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կազմավորելու կարգը

2-րդ կետը՝ «Յուրաքանչյուր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում առնվազն մեկ անդամ պետք է ունենա իրավաբանական կրթություն, առնվազն մեկը պետք է լինի կին: Նոր կազմավորման դեպքում յուրաքանչյուր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ը պետք է փոխվի»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Յուրաքանչյուր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմում առնվազն մեկ անդամ պետք է ունենա իրավաբանական կրթություն, **առնվազն երկուսը պետք է լինեն կին:** Նոր կազմավորման դեպքում յուրաքանչյուր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների առնվազն 1/3-ը պետք է փոխվի»:

Նույն հոդվածի 6-րդ կետը՝ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահների, հանձնաժողովների նախագահների տեղակալներին և հանձնաժողովների քարտուղարներին ընտրում են համապատասխան հանձնաժողովներն իրենց կազմերից»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նախագահներին, հանձնաժողովների նախագահների տեղակալներին և հանձնաժողովների քարտուղարներին ընտրում են համապատասխան հանձնաժողովներն իրենց կազմերից: **Ընտրատար-**



րածքային ընտրական հանձնաժողովի ղեկավարներից առնվազն մեկը պետք է լինի կին»:

Հոդված 42. Տեղամասային ընտրական հանձնաժողով կազմավորելու կարգը

1-ին կետը՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովն ունի առնվազն յոթ անդամ»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովն ունի առնվազն յոթ անդամ: **Յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում առնվազն երեքը պետք է լինեն այլ սեռի»:**

4-րդ կետը՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քարտուղարը նշանակվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ, հանձնաժողովում հանրապետության նախագահի և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) կողմից նշանակված անդամների թվից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքի»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, տեղակալը և քարտուղարը նշանակվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ, հանձնաժողովում հանրապետության նախագահի և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) կողմից նշանակված անդամների թվից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքի: **Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավարներից առնվազն մեկը պետք է լինի կին»:**

Հոդված 57. Քվեաթերթիկը, քվեարկության ծրարը

3-րդ կետը՝ «Քվեաթերթիկի հատման գծից վերև՝ ելունդի վրա, նշվում է քվեաթերթիկի հերթական համարը: Թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, կուսակցությունների անվանումները քվեաթերթիկում նշվում են հատման գծից ներքև՝ ձախ կողմում այբբենական հերթականությամբ, իսկ աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ քվեարկողի կողմից նշում կատարելու համար»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Քվեաթերթիկի հատման գծից վերև՝ ելունդի վրա, նշվում է քվեաթերթիկի հերթական համարը: Թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, կուսակցությունների անվանումները քվեաթերթիկում նշվում են հատման գծից ներքև՝ ձախ կողմում

այբբենական հերթականությամբ, իսկ աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ քվեարկողի կողմից նշում կատարելու համար: **Քվեաթերթիկի ներքևի մասում նշվում են «Բոլորին դեմ եմ քառերը՝ աջ կողմում նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունով»:**

Առաջարկությունը հիմնավորվում է հետևյալ մտեցումներով. նախ՝ այդ դեպքում ընտրողները հնարավորություն կստանան իրենց քաղաքական դիրքորոշումն արտահայտելու քվեարկության միջոցով: Դա կնպաստի քվեարկությանն ընտրողների մասնակցության աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև կնվազեցնի անվավեր քվեաթերթիկների քանակությունը:

Հոդված 71. Տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների արձանագրությունը

Տվյալ հոդվածում ավելացնել առանձին ենթակետ հետևյալ շարադրմամբ.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է հանձնաժողովի անդամների և վարահված անչանց պահանջի դեպքում նրանց տրամադրել քվեարկության արդյունքների ստորագրված արձանագրության պատճենը»:

Հոդված 108. Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուներ առաջադրելը

2-րդ կետ. «Յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրելու թեկնածուների միայն մեկ ընտրական ցուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից առանձին ընտրական ցուցակ առաջադրել: Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության ընտրական ցուցակի առաջին տասնյակում պետք է ընդգրկված լինի առնվազն մեկ կին, իսկ ցուցակի 11-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակում (11-15, 11-20, 11-25 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) առնվազն 20 տոկոսը պետք է լինեն կանայք: Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության ընտրական ցուցակում պետք է ընդգրկված լինի առնվազն 10 թեկնածու, ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության անդամ չհանդիսացող անձինք»:

Հոդվածի «ընտրական ցուցակի առաջին տասնյակում պետք է ընդգրկված լինի առնվազն մեկ կին, իսկ ցուցակի 11-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակում (11-15, 11-20, 11-25 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) առնվազն



20 տոկոսը պետք է լինեն կանայք» դրույթով, ըստ էության, Հայաստանի օրենսդրության մեջ ամրագրվում է ուղղակի խորականություն սեռի հարկանիշով, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ Ազգային ժողովի կողմից 1993 թ. վավերացրած Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիային:

Հիմնավորված չէ, թե ինչու ցուցակի առաջին տասնյակում պետք է ընդգրկված լինի առնվազն մեկ կին, իսկ 11-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում՝ առնվազն 20 տոկոսը: Հոդվածը ձևակերպված է անհասկանալի և խճճված, մասնավորապես՝ հնգյակների ձևավորման սկզբունքը:

Առաջարկվում է նշված կետը շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրելու թեկնածուների միայն մեկ ընտրական ցուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից առանձին ընտրական ցուցակ առաջադրելու: **Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության ցուցակում մեկ սեռի ներկայացվածությունը չի կարող գերազանցել 70%-ը, ընդ որում՝ առաջադրված կին և փղամարդ թեկնածուների հաջորդականության փարբերությունը չպետք է գերազանցի երեք փեղը:**

Ցուցակից կնոջ թեկնածությունը հանելու կամ պարզամավորական մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա փեղը պետք է զբաղեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը»:

Գենդերային քվոտայի բարձրացման վերաբերյալ առաջարկությունը բխում է.

- 2007 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներից,
- 2010 թ. փետրվարի 11-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված Գենդերային քաղաքականության հայեցակարգից,
- 2009 թ. Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի 43-րդ նստաշրջանում Հայաստանի ներկայացրած համատեղ երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ ընդունված եզրափակիչ դիտողություններից, որոնցում կոչ է արվել Հայաստանին քննարկել առաջարկված քվոտան 20 տոկոսից բարձրացնելու հնարավորությունը,
- 2010 թ. հունվարին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վերաժողովի ընդունված 1706 բանաձևի երաշխավորությունից՝ համամասնական ընտրակարգ ունեցող երկրներում քննարկել օրենսդրությամբ ոչ միայն կին թեկնածուների

բարձր տոկոս նախատեսող քվոտայի (լավագույն դեպքում առնվազն 40 տոկոս) ամրագրում, այլև թեկնածուների ցուցակում խիստ հերթականության սահմանում տղամարդկանց և կանանց հերթագայության միջոցով:

Գլուխ 34 Երևանի ավագանու անդամի թեկնածուների առաջադրումը և գրանցումը
Յոդված 155. Կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը

2-րդ կետը՝ «Յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրելու միայն մեկ ընտրական ցուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից թեկնածուների առանձին ցուցակ առաջադրելու: Կուսակցության ներկայացրած ընտրական ցուցակում պետք է ընդգրկված լինի առնվազն 10 թեկնածու և առնվազն 10 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին»,

շարադրել հետևյալ խմբագրմամբ.

«Յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրելու միայն մեկ ընտրական ցուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից թեկնածուների առանձին ցուցակ առաջադրելու: Կուսակցության ներկայացրած ընտրական ցուցակում պետք է ընդգրկված լինի առնվազն 10 թեկնածու, և առնվազն 30 տոկոսը պետք է լինեն կանայք, ընդ որում՝ առաջադրված կին և փղամարդ թեկնածուների հաջորդականության փարբերությունը չպետք է գերազանցի երեք փեղը:

Ցուցակից կնոջ թեկնածությունը հանելու կամ մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա փեղը պետք է զբաղեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը»:

Կանանց բարձր մտավոր ներուժ ունեցող մայրաքաղաքի համար 10-տոկոսանոց քվոտան, այսինքն՝ երկու անգամ ցածր Ազգային ժողովի ընտրությունների համար սահմանված քվոտայից, հիմնավորված և ընդունելի չէ: Բացի այդ, «ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին» դրույթը պարունակում է խտրականություն սեռի հատկանիշով:

33 Ազգային ժողովի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում հաշվի է առնվել կլոր սեղանի մասնակիցների կողմից արված առաջարկությունների մեծ մասը:



**ԳԻՏԵԼԻՔԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Քարչրագույն քաղաքական դասընթացների ծրագրով անցկացված կանանց լիդերության դպրոցի 28-րդ հոսքի պարապմունքները նպատակաուղղված էին մասնաճյուղերի ղեկավարների գիտելիքների խորացման և հասարակական գործունեության կազմակերպման ժամանակակից տեխնոլոգիաների յուրացման միջոցով մասնաճյուղերի գործունեության արդյունավետության բարձրացմանը և մասնաճյուղերի միջև համագործակցության ամրապնդմանը:

**ԴՊՐՈՑԻ ԸՆՏՐՎԱԾ ՁԵՎԱԶԱՓԸ ԿՆՊԱՍՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆԸ**



Դասընթացին մասնակցեցին Ասոցիացիայի Երևանի և ութ մարզերի 20 մասնաճյուղերի նախագահները, Քաղաքացիական նախաձեռնությունների Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերի կենտրոնների ղեկավարները:

Դպրոցի պարապմունքներն անցկացվեցին Երևանում և Ծաղկաձորի Գրողների ստեղծագործական տանը:

Ունկնդիրները ստացան խորացված գիտելիքներ՝

- քաղաքացիական հասարակության, քաղաքական համակարգի և քաղաքացիական մասնակցության, գենդերային հավասարության հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների, գենդերային մշակույթի՝ որպես զուգակշռված ժողովրդավարության նախադրյալի,

ման ուղիների, գենդերային մշակույթի՝ որպես զուգակշռված ժողովրդավարության նախադրյալի,

- քաղաքացիական նախաձեռնությունների խթանման և շահերի պաշտպանության, լիդերության որակների ձևավորման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սոցիալական գործընկերության ձևավորման վերաբերյալ:

Մասնաճյուղերի ղեկավարները հնարավորություն ունեցան, աշխատելով խմբերում, անմիջապես գործնականում կիրառելու հասարակական կազմակերպությունների գործունեության ռազմավարական և կարճաժամկետ պլանավորման տեխնոլոգիաներին նվիրված պարապմունքի ժամանակ ստացած գիտելիքները և մշակեցին իրենց մասնաճյուղերի 2011 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների աշխատանքային պլանի նախագիծը:

Պետական գենդերային քաղաքականության հայեցակարգի մանրամասն ներկայացումից հետո խմբային գործնական աշխատանքի արդյունքում ունկնդիրները կազմեցին գենդերային քա-

ղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի և 2011 թ. մարզերի (քաղաքների) միջոցառումների պլանի վերաբերյալ առաջարկությունների փաթեթներ: Այս աշխատանքը միաժամանակ օգնեց մասնաճյուղերի ղեկավարներին հստակ պատկերացնելու տեղական ինքնակառավարման մարմինների հետ սոցիալական գործընկերության հնարավոր ուղղությունները:

«ՀԿ-ների աշխատանքային պրակտիկայում գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի և երաշխավորությունների օգտագործումը՝ որպես օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների հետ համագործակցության և կանանց իրավունքների պաշտպանության գործիք» թեմայով պարապմունքին հաջորդած խմբային աշխատանքի ընթացքում մասնակիցները մշակեցին ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարման մասին ՀՀ 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցի առնչությամբ ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի դիտողու-



թյունների կատարմանն ուղղված միջոցառումների պլանի վերաբերյալ առաջարկությունների փաթեթներ:

Այսպիսով, դպրոցի ընտրված ձևաչափը հնարավորություն ընձեռեց մասնաճյուղերի ղեկավարներին գործնական պարապմունքների արդյունքում մշակելու երեք փաստաթուղթ, որոնք կնպաստեն նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը և տեղական ինքնակառավարման մարմինների հետ սոցիալական գործընկերության հետագա խորացմանը:

Հասարակական գործունեության խթանմանն ուղղված ծրագրերի, մասնավորապես դրամաշնորհային ծրագրերի մշակման ու իրականացման տեխնոլոգիաներին, միջոցների ու ռեսուրսների հայթայթման մեթոդներին և ուղիներին նվիրված պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների գործնական կիրառման արգասիքը եղան դասընթացի ավարտից հետո մասնաճյուղերի նախագահների խմբերի կողմից «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն» ծրագրի շրջանակներում փոքր դրամաշնորհների մրցույթին ներկայացված հայտերը:

Ասոցիացիայի մասնաճյուղերի ղեկավարներին երկրում առկա սոցիալական և առողջապահական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ՀՀ կառավարության ծրագրերին, տարածաշրջանի ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում ՄԱԿ-ի և ԵԱՀԿ առաջնահերթու-

թյուններին ծանոթացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Երևանում անցկացված փուլի ընթացքում կազմակերպվեցին հանդիպումներ ՀՀ Հանրային խորհրդում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, ՀՀ առողջապահության նախարարությունում, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակում



և ՄԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչությունում:

ՀՀ Հանրային խորհրդում կազմակերպված հանդիպումներ կխոստությունը Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի հանձնաժողովի նախագահ, ԵՊՀ դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Հովհաննես Հովհաննիսյանի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Հանրային խորհրդի կրթական համակարգի հիմնախնդիրներով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար Էդուարդ Ղազարյանի և Հանրային խորհրդի առողջապահական և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ, Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկ-

տոր Դերենիկ Դումանյանի հետ հնարավորություն տվեց մասնաճյուղերի նախագահներին ծանոթանալու Հայաստանում քաղաքացիական հասարակության հաստատությունների զարգացման առանձնահատկություններին և Հանրային խորհրդի դերակատարությանը, կրթության զարգացման առաջ-

նահերթ հիմնահարցերին և դրանց լուծման ուղղությամբ Հանրային խորհրդի աշխատանքային խմբի իրականացրած քայլերին, Հանրային խորհրդի օրակարգում քննարկվող առողջապահական և սոցիալական հիմնահարցերին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանի հետ հանդիպման ընթացքում ներկայացվեց նախարարության՝ որպես հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման լիազոր մարմնի գործունեությունը կանանց վիճակի բարելավման և գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ: Այնուհետև աշ-

Դպրոցի պարապմունքների կիրառական ուղղվածության շնորհիվ մեզ հետ տրանում ենք պարասպորտի երեք փաստաթուղթ, որոնք կուղղորդեն մեզ ամենօրյա աշխատանքում:

Լիլիթ Ասոյան

Շիրակի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող



խույժ երկխոսություն ծավալվեց երկրում գենդերային հավասարակշռության հաստատման հիմնախնդիրների, այդ ուղղությամբ Հայաստանի ստանձնած պարտավորությունների և միջազգային կազմակերպությունների երաշխավորությունների կենսագործման ուղիների շուրջ:

ՀՀ առողջապահության նախարար Արտյոմ Քուչկյանի հետ հանդիպման ժամանակ մասնաճյուղերի նախագահները ծանոթացան նախարարության գործունեությանը՝ ուղղված համակարգի արդիականացմանը, կանանց որակյալ առողջապահական ծառայությունների մատուցմանը, ծննդօգնության հավաստագրերի և համաֆինանսավորման ծրագրերի իրականացմանը:

Նախարարների հետ հանդիպումների ընթացքում քննարկ-

նր և գործունեության հիմնական ուղղություններին, տարածաշրջանի ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակում նրանց առաջնահերթություններին:

Կանանց լիդերության դպրոցի 28-րդ հոսքի պարապմունքների արդյունքները ցույց տվեցին, որ ընտրվել էր դասընթացի անցկացման արդյունավետ ձևաչափ, որը հնարավորություն տվեց տեսական և գործնական պարապմունքների զուգակցման միջոցով մասնաճյուղերի նախագահների գիտելիքները խորացնելու հետ մեկտեղ զարգացնելու նրանց կարողություններն ու հմտությունները:

Բարայանի կարծիքով. «Դպրոցը յուրաքանչյուրիս գործունեության վերլուծություն էր և մոնիթորինգը»:



Դպրոցի գործնական և միևնույն ժամանակ բարյացակամ մթնոլորտը հնարավորություն տվեց մեզ ավելի ջերմ և մտերմիկ անձնական հարաբերություններ հաստատելու միմյանց հետ, ինչը, անշուշտ, կնպաստի մասնաճյուղերի ավելի սերտ համագործակցությանը»:

Մասնաճյուղերի ղեկավարներից շատերը կարևորեցին միմյանց հետ փորձ փոխանակելու հնարավորությունը, որն ընձեռվեց նրանց այս օրերի ընթացքում, ընդ որում ոչ միայն պարապմունքների ժամանակ, այլև ազատ ժամերին անմիջական շփման ընթացքում:

Ասոցիացիայի Երևանի Աջափնյակ համայնքի մասնաճյուղի նախագահ Գոհար Արզանյանը նշեց. «Մասնակցությունն այս դասընթացին օգնեց մեզ վերաիմաստավորելու մասնաճյուղերի

Նախարարություններում և միջազգային կազմակերպություններում անցկացված հանդիպումները ոչ միայն տեղեկատվական բնույթ էին կրում, այլև ուսուցողական նշանակություն ունեցան, քանի որ սովորեցինք, թե ինչպես ճիշտ, կոնկրետ և հակիրճ ձևակերպել նախարարին ուղղված հարցը:

Ելենա Վարդանյան

Ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի նախագահ

վեցին նաև հասարակական սեկտորի, մասնավորապես Ասոցիացիայի հետ սոցիալական գործընկերության հեռանկարները:

ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսի և ՄԱԿ-ի հայաստանյան ներկայացուցչությունում ՄԱԿ-ի համակարգողի ավագ խորհրդական Արմեն Բայբուրդյանի, Միավորված ազգերի Բնակչության հիմնադրամի ծրագրերի ղեկավար Աիդա Ղազարյանի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի լրատվության պատասխանատու Էմիլ Սահակյանի հետ հանդիպումների ժամանակ նրանք ծանոթացան այդ միջազգային կազմակերպությունների առաքելությա-

րա եւն վկայում նաև պարապմունքների ընդհանուր ամփոփման ժամանակ հնչած կարծիքները: Բոլոր ունկնդիրները գոհունակություն հայտնեցին հատկապես դպրոցի կազմակերպման ձևաչափի ճիշտ ընտ-

Դպրոցը բարձրացրեց նշաշողը, և այժմ բոլորիս խնդիրն է պահպանել այդ մակարդակը:

Անահիտ Աղոյան

Ասոցիացիայի Նոր Հանրնի մասնաճյուղի նախագահ

րության կապակցությամբ՝ առանձնապես շեշտելով պարապմունքների ընդգրկումն և գործնական բնույթը:

Ասոցիացիայի Վանաձորի մասնաճյուղի նախագահ Սոֆյա

Նախագահների դերն ու նշանակալիությունը հասարակական գործունեության ոլորտում»:

Փայանե Սերոյան

Կանանց լիդերության դպրոցի 28-րդ հոսքի համակարգող



ԿԱՆԱՆՑ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կանանց լիդերության դպրոցի 28-րդ հոսքի բարձրագույն քաղաքական դասընթացների առաջին պարապմունքը սկսվեց ՀՀ Հանրային խորհրդի հանձնաժողովների նախագահների հետ հանդիպումով, որի ընթացքում ներկայացվեցին հասարակության կյանքի տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրները և հանձնաժողովների կողմից դրանց լուծման ուղղությամբ կատարված քայլերը:

Ասոցիացիայի մասնաճյուղերի նախագահները բարձրացրեցին կրթական և առողջապահության ոլորտներում կատարված փոփոխությունների, դրանց արդյունքների և հնարավոր վտանգների վերաբերյալ բազմաբնույթ հարցեր: Առաջ քաշվեցին առանց գիտական հետազոտությունների դպրոցական առարկայական չափորոշիչների, ծրագրերի և դրանց ուսուցման մեթոդական ցուցումների փոփոխություններին վերաբերող խնդիրները:

Բարձրացվեցին հիվանդությունների կանխարգելման միջոցառումների անհրաժեշտության, ընտանեկան բժշկի ինստիտուտի կայացման, առողջապահական հիմնարկներին հիվանդների կողմից վճարվող համավճարների նպատակահարմարության հարցերը:

Զննարկվեցին հասարակության կյանքի տարբեր ոլորտներում կատարվող փոփոխությունների գործընթացին հասարակական կազմակերպությունների մասնակցության անհրաժեշտության, տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառույցների հետ սոցիալական գործընկերության զարգացման հնարավորությունների հիմնախնդիրները:

Կարևորվեց Հանրային խորհրդի ու հասարակական կազմակերպությունների համագործակցության խորացումը, մասնավորապես՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունմանն ուղղված լրբինգի կազմակերպման տեսանկյունից:



Արմնուհի Կյուրեղյան

Լոռու քաղաքացիական նախաշեռնությունների կենտրոնի համադասող



Արդյունավետ և բովանդակալից եր հանդիպումը ՀՀ Հանրային խորհրդում:

Որպես ուսուցչի՝ ինձ համար խիստ հետաքրքրական էին կրթական համակարգի խնդիրներին վերաբերող վերլուծությունները, եզրահանգումները, Հանրային խորհրդի՝ առաջիկայում նախատեսվող գործողությունների ընթացքը:

12-ամյա կրթական համակարգ, ավագ դպրոց, դասագրքեր, ծրագրեր, չափորոշիչների մշակում... Հանրությունը դեռևս մեծ դժվարությամբ է ընդունում 12-ամյա կրթության իրողությունը, և դա ունի իր պատճառները: Ավագ դպրոցները, անցնելով նախարարության իրավասությանը, բազում չլուծված հիմնախնդիրների առաջ են կանգնում: Ինձ համար ընկալելի է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության փոփոխության, լուսավորության (հանրակրթության) և բարձրագույն կրթության ու գիտության բնագավառների առանձնացման անհրաժեշտության գաղափարը: Ես համոզված եմ, որ դրանից կշահեն և՛ դպրոցներն ու կրթության կառավարման միջին օղակները, և՛ գիտությունը, և՛ հասարակությունն ամբողջությամբ:

Հանդիպումից ես այն տպավորությունն ստացա, որ Հանրային խորհրդի նշված հանձնաժողովն իր խորը վերլուծություններով, առաջարկություններով մեծապես կնպաստի կրթական համակարգում դրական բարեփոխումների իրականացմանը և շահագրգիռ գերատեսչություններին կմղի գործնական քայլերի: Կարծում եմ՝ հանդիպումն օգտակար էր ոչ միայն մեզ համար, այլև՝ Հանրային խորհրդի հանձնաժողովների նախագահների և փորձագետի, որովհետև դպրոցի մասնակիցները ներկայացնում էին հանրապետության տարբեր մարզերի բնակչության կարծիքը:

Անահիտ Ավետիսյան

Ասոցիացիայի Մասնի մասնաճյուղի նախագահ

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Երևանյան գրասենյակում տեղի ունեցած հանդիպման Ժամանակ դեսպան Սերգեյ Կապինոսը կարևորեց գենդերային հավասարության հաստատման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև կանանց քաղաքական մասնակցության ակտիվացումն ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեությունը:

Դեսպանը նշեց, որ ԵԱՀԿ-ն հետագայում ևս շարունակելու է աջակցել քաղաքացիական հասարակության ինստիտուտներին և կարևորում է կոալիցիաների ստեղծումը, ինչը առավելագույնս կնպաստի ժողովրդավարության ամրապնդմանը: Ընդգծելով, որ ԵԱՀԿ-ն չի կարող ազդել երկրի ներքաղաքական վիճակի վրա և գործուն քայլեր ձեռնարկել կանանց քաղաքական մասնակցության ապահովման ուղղությամբ, Սերգեյ Կապինոսը բարձր գնահատեց Ասոցիացիայի գործունեությունը այդ դաշտում՝ համարելով նրան լավագույն և կայուն գործընկեր:



Լիլիթ Ասոյան

Շիրակի քաղաքացիական նախաշեռնությունների կենտրոնի համադասող



ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԱԳՐԻՑ

ԱՆՅՐԱԺԵՇՏ ԵՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՄՂՍԱՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐ



Վերջին 15 տարիների ընթացքում կանանց ակտիվության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական իրադարձությունների նկատմամբ հետաքրքրության դրսևորման դրական դինամիկա կա: Սակայն հասարակության մեջ շարունակում են մնալ այն հիմնախնդիրները, որոնց լուծումը պայմանավորված է քաղաքական մշակույթի ձևավորմամբ, ժողովրդավարական հասարակությունների գործունեության նորմերով ու սկզբունքներով:

Քաղաքականության հրատապ հիմնախնդիրների լուծման գործում շատ կարևոր է, թե ինչպես են քաղաքացիներն ընկալում իշխանությունների հետ իրենց հարաբերությունները: Եական աշխարհայացքային փոփոխությունների առկայության պայմաններում անգամ, առանց իշխանությունների քաղաքական կամքի և գենդերային հավասարության հետևողական քաղաքականության, հնարավոր չէ իրական արդյունքների հասնել: Կասկած չկա, որ հասարակությունը նպատակաուղղված է քաղաքացիական և քաղաքա-

կան մասնակցությանը, ինչպես նաև կանանց մասնակցության ձևերի հետագա ընդլայնման ու կատարելագործմանը, սակայն այդ գործընթացն աչքի չի ընկնում իրական ակտիվ մասնակցությամբ:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Մարալիկի մասնաճյուղն իր գործունեությունը ծավալում է 2005-ից: Համագործակցելով Ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի և քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի հետ՝ մասնաճյուղը Մարալիկ քաղաքում բազմիցս կազմակերպել է սեմինարներ, կլոր սեղան-քննարկումներ՝ գենդերային հավասարության, կանանց դերի բարձրացման, քաղաքացիական և քաղաքական մասնակցության, ինչպես նաև կանանց մասնակցության ձևերի հետագա ընդլայնման ու կատարելագործման թեմաներով:

Քաղաքական իրադարձությունների նկատմամբ հետաքրքրության ակնառու շարժընթաց արձանագրելով՝ մեր մասնաճյուղի անդամների համաձայնեցված որոշման հիման վրա կազմակերպվեց տարածաշրջանի 16 գյուղական համայնքների կանանց և Ասոցիացիայի անդամների երկխոսություն, որի նպատակն էր խորությամբ ուսումնասիրել ներկայիս կարծրատիպերը և իրազեկել գյուղաբնակ կանանց: Պատկերը շատ տխուր էր:

Այն համայնքներում, որոնց կապը մայրաքաղաքի կամ Գյումրու հետ սերտ է, կարծրատիպերը հաղթահարելու միտում նկատվում էր, իսկ այնտեղ, որտեղ հաղորդակցության միջոցների ու ճանապարհների

դժվարություններ կան, և կապը քաղաքի հետ թույլ է, կարծրատիպերը շատ խոր արմատներ ունեն. տղամարդիկ կարծում էին անգամ, որ մեզնից հանդիպումներին կանանց մասնակցության կարիք չկա, իրենք, տուն վերադառնալով, կպատմեն այն, ինչ լսել են մեզնից:

Գյուղաբնակ հասարակության մեջ այսօր կարծիք է հնչում, որ գենդերային անհավասարությունը պետք է դիտարկել սոցիալական շերտավորման համակարգի մեջ: Գենդերային անհավասարության առավելագույն դրսևորումը տեսնում են պետական կառավարման համակարգում: Գենդերային հավասարությունը խոչընդոտող հիմնական գործոն է համարվում ավանդական մտածելակերպը. դարերով հաստատված հայրիշխանական կարծրատիպերը նախկինի պես սահմանում են վարքականոցները և արգելքների շրջանակները: Կանայք, փաստորեն, ոչ մի ազդեցություն չեն գործում ինստիտուցիոնալ, կառուցվածքային և քաղաքական փոփոխությունների վրա, ժողովրդավարական փոխակերպումների և քաղաքական հասարակության կայացման գործընթացի գործուն սուբյեկտ չեն հանդիսանում:

Հատկապես գյուղական համայնքներում հաջորդ նախագահական ընտրություններում կին թեկնածուի առաջադրումը հավանական չի համարվում, քանի որ «մեր հասարակությունը դեռևս պատրաստ չէ դրան», «իշխանական կառույցները գործի կղմեն վարչական ռեսուրսները հօգուտ իրենց թեկնածուի»:

Հայաստանում գենդերային իրավիճակը բնութագրվում է ըն-



տանեկան, իրավական, մշակութային, սոցիալական, տնտեսական և հատկապես քաղաքական ոլորտներում գենդերային անհավասարակշռության խորացմամբ:

Անհրաժեշտ է գործադրել գենդերային հավասարության առաջնորդման առավել արդյունավետ մեխանիզմներ: Դրանք պետք է ելնեն ազգային, ես կասեի՝ նույնիսկ տարածաշրջանային առանձնահատկություններից և կանանց սոցիալական կարգավիճակի վրա ներգործող տնտեսական ու քաղաքական գործոններից: Նախևառաջ անհրաժեշտ է ունենալ սեռի հատկանիշով խտրականության հաղթահարմանն ուղղված ռազմավարություն: Համաձայն են, որ իրազեկության բարձրացումը կարևոր է, բայց ոչ բավարար:

Իրազեկության բարձրացումը կխթանի կանանց ակտիվ մասնակցությունը, եթե մանավանդ կանայք իմանան իրենց իրավունքները: Այդ է փաստում այն հանգամանքը, որ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին տեղեկատվությունից հետո կարծիքներ հնչեցին, որ գենդերային հիմնախնդիրները, օրենսդրական դաշտ բերելով, ավելի արագ կլուծվեն:

Անշուշտ, կինն առաջին հերթին պետք է ընտանիքին պատկանի, սակայն նա իրեն լիարժեք մարդ զգալ չի կարող, եթե հնարավորություն չունի իրացնելու իր հետաքրքրությունները, նախասիրություններն ու հակումները:

Գենդերային իրավահավասարությունը պետք է ապահովի ոչ միայն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները, այլև հավասար հնարավորություններն ու արդյունքները: Իսկ այդ արդյունքների ապահովման գործում խիստ կարևորում են հասարակական կազմակերպությունների ակտիվացումը, Ազգային ծրագրի խնդիրները, ռազմավարությունը և միջոցառումներն առավել լայն շրջանակներում քննարկելը, մեր ներուժը Հազարամյակի հռչակագրի երրորդ նպատակին՝ գենդերային հավասարությանը ծառայեցնելը:

Ուղանա Հարությունյան

Ասոցիացիայի Մարալիկի մասնաճյուղի նախագահ, Մարալիկի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն

ԱՐԹԻԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ԴԱՆԴԱՂ, ԲԱՅՑ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՔԱՅԼԵՐՈՎ ԳՆՈՒՄ Է ԻՐ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ



Շիրակի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի մտահղացմամբ 2005 թ. դեկտեմբերի 5-ին Շիրակի մարզի Արթիկ քաղաքում ստեղծվեց Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Արթիկի մասնաճյուղը, որը 15 անդամ ունի: Նրանցից 5-ն ավարտել են Ասոցիացիայի կանանց լիդե-

րության դպրոցը և ստացել հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպչի գիտելիքներ ու հմտություններ:

Մեծ էր հետաքրքրությունը ժողովրդավարության կերտման, քաղաքացիական հասարակության ձևավորման, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման խնդիրների նկատմամբ:

Կազմակերպության անդամներն իրենց ներդրումն ունեն կազմակերպության կայացման խնդրում:

Օգտվելով առիթից՝ ուզում են երախտագիտություն հայտնել Արթիկի «Հատուկ բժշկական քոլեջ» ՓԲԸ-ի հիմնադիր և գործադիր տնօրեններին՝ տեր և տիկին Հովհաննիսյաններին, որոնց օժանդակությամբ քոլեջում կազմակերպվում են սեմինարներ ու կլոր սեղաններ: Մեր նախաձեռնությամբ կազմակերպվող սեմինար-

ներին, մասնաճյուղի անդամներից բացի, մշտապես մասնակցում են դպրոցների, քաղաքապետարանի, գրադարանի, զբաղվածության կենտրոնի և այլ հիմնարկ-ձեռնարկությունների կանայք: Հասարակական կազմակերպության գործունեությունը պարբերաբար լուսաբանվում է Արթիկի «Տուֆաշխարի» թերթում:

Շատ հաճախ կազմակերպվում են կլոր սեղաններ Գյումրու մասնաճյուղի հետ: Հատկապես հետաքրքիր է անցել «Կանանց քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման ռազմավարությունները և հեռանկարը» ծրագրի շրջանակներում կազմակերպված հանդիպումը, որը վարում էր Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Ասոյանը: Մեծ էր լսարանի հետաքրքրությունը ներկայացվող նյութի նկատմամբ: «Կանանց և տղամարդ-



կանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի քննարկումը, որի մասնակիցների թիվը մեծ էր, ունեցավ լայն արձագանք քաղաքական-հասարակական շրջանակներում:

Մասնաճյուղն իր առջև խնդիր է դրել Արթիկի քաղաքապետարա-

նում ստեղծել կանանց խորհուրդ, որը կզբաղվի կանանց հիմնախնդիրներով:

Ինձ համար՝ որպես մասնաճյուղի նախագահի, ուրախալի փաստ է երիտասարդ կանանց հետաքրքրությունը մեր կազմակերպության նկատմամբ: Մեր մասնաճյուղը դանդաղ, բայց հաստա-

տուն քայլերով գնում է իր առջև ծառայած խնդիրների լուծման ճանապարհով:

Սուսաննա Տոնոյան

Ասոցիացիայի Արթիկի մասնաճյուղի նախագահ, Արթիկի հատուկ բժշկական քոլեջի դաստիարակության գծով փոխտնօրեն

ՆՈՐԱՏԵՂԾ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ԿԱՅԱՆՈՒՄ Է



Ախուրյանի նորաստեղծ մասնաճյուղը երկու տարվա ընթացքում ծավալել է որոշակի գործունեություն՝ լուրջ ուշադրություն դարձնելով կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվության խթանման հարցերին, Ասոցիացիայի մասնաճյուղի անդամների իրավական և քաղաքական գիտելիքների բարձրացման խնդիրներին: Մասնաճյուղի նախագահը՝ դպրոցի անգլերենի ուսուցչուհի Էլլա Ծատուրյանը, մասնակցել է Երևանում Ասոցիացիայի կազմակերպած կանանց լիդերության դպրոցի դասընթացներին, իսկ անդամներ Մարիամ Թոսունյանը և Գոհար Զալոյանը մասնակցել են Գյումրու կանանց լիդերության դպրոցի դասընթացներին և ստացել ավարտական վկայականներ:

«Կանանց շարժումը և քաղաքացիական նախաձեռնությունները հազարամյակի մարտահրավերների համատեքստում» փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

անցկացվել են կլոր սեղաններ, հանդիպումներ և համաժողով, նաև քննարկում՝ «Գեներային հավասարությանը հասնելու մեխանիզմները և դրանց կիրառման հնարավորություններն արդի փուլում» թեմայով:

Ախուրյանում կազմակերպվել են գեներային հավասարության և գեներային բռնության հիմնախնդիրներին նվիրված իրազեկման բարձրացման հանդիպումներ «Ընդդեմ գեներային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում:

Ասոցիացիայի Ախուրյանի մասնաճյուղը ակտիվ համագործակցում է Գյումրու մասնաճյուղի և համայնքում գործող երիտասարդական ակումբի հետ:

Երևանի լիդերության դասընթացներին մասնակցել է մեր դպրոցի շրջանավարտ Արևիկ Դարբինյանը: Նա դպրոցն ավարտելուց հետո շահել է «Գիտելիքը՝ որպես քաղաքացիական նախաձեռնությունների խթանման կարևոր գործոն» փոքր դրամաշնորհ, որի շրջանակներում Ախուրյան համայնքում հիմնադրվեց պատանի լիդերների դպրոց համայնքի բարձրասարանցիների համար, և երեք գյուղական համայնքներում՝ Արևիկում, Կառնուտում ու Կամոյում անցկացվեցին կլոր սեղան-հանդիպումներ՝ «Գեներային կարծրատիպերի հաղթահարումը՝ որպես ժողովրդավարացման կայացման կարևոր գործոն» թեմայով:

Ախուրյանում է անցկացվել Շիրակի մարզի համաժողովը «Գյուղական վայրերի և փոքր քաղաքներ

րի գեներային հիմնախնդիրները հազարամյակի մարտահրավերների համատեքստում» թեմայով, որին մասնակցել են հասարակական և քաղաքական կազմակերպությունների լիդերներ, Ասոցիացիայի մասնաճյուղերի անդամներ հինգ գյուղական համայնքներից և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում քննարկվել են համայնքներում գեներային հավասարության հասնելու մեխանիզմները, և նշվել են բազմաթիվ մեխանիզմներ, որոնց շնորհիվ կարելի է փոփոխությունների հասնել: Դրանցից առաջինը տեղեկացված լինելն է այն օրենքների ու հայեցակարգերի մասին, որոնք վերաբերում են գեներային քաղաքականությանը: Մասնակիցները մտախոզված էին, որ կանանց դերը համայնքներում կատարվող գործընթացներում աննշան է, նրանց մասնակցությունը ՏԻՄ ընտրություններին և համայնքային հիմնախնդիրների լուծմանը շատ թույլ է:

Եղան բազմաթիվ առաջարկներ: Որպես կարևոր խնդիր քաղաքացիական հասարակության կայացման գործում նշվեց հասարակական կազմակերպությունների և կառավարման կառույցների սոցիալական համագործակցությունը: Գյուղական համայնքների ներկայացուցիչներն առաջարկեցին հաճախակի կազմակերպել նման հանդիպումներ, որպեսզի ավելի տեղեկացված և պատրաստակալ լինեն:

Համաժողովի աշխատանքները լուսաբանվեցին տեղական հեռուստաալիքներով:



Համաժողովի ավարտից հետո Ասոցիացիայի Ախուրյանի և Գյումրու մասնաճյուղերը ձեռնամուխ եղան տարբեր գյուղական համայնքներում իրազեկման հանդիպումների կազմակերպմանը:

Բնակչության, հատկապես կանանց իրազեկության բարձրացման ուղղությամբ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, կանանց դերի ու իրավունքների հիմնախնդիրներին առնչվող քննարկումներ: Հենց իրենք՝ կանայք են շահագրգռված փոխելու իրենց նկատմամբ խտրական մոտեցումները, ինչպես նաև սովորույթներն ու գործելակերպը: Գեոդերային խնդիրների բնագավառում կանանց լիդերության դպրոցների ստեղծումն ու շարունակական դասընթացները դրական են ազդում կանանց հոգեկան և սոցիալական վիճակի վրա:

Մասնաճյուղի լիդերները քաջ գիտակցում են, որ հատկապես գյուղական վայրերում կանայք բավարար չեն ինտեգրված հասարակությանը: Նրանց մեջ ձևավորված չէ մշակութային, քաղաքացիական, քաղաքական իրավունքների ըմբռնումը: Կլոր սեղանների, քննարկումների արդյունքները որոշ չափով խթանում են գեոդերային հավասարության հիմնախնդրի ճիշտ ընկալումը՝ սկսած առողջապահական ծառայությունից ժամանակին օգտվելու, բժշկական օգնություն ստանալու իրական հնարավորությունների բացակայությունից: Հատկապես՝ գյուղական վայրերում: Կինն է ավանդաբար պատասխանատվություն կրում և հոգ տանում ընտանիքի բոլոր անդամների առողջության մասին: Սակայն բուժման կարիք ունեցող կանայք հազվադեպ են դիմում բժշկի: Սա խոսում է այն մասին, որ թերազնահատվում և հետին պլան է մղվում կանանց վերաբերող ցանկացած հարց:

Մասնաճյուղում քննարկվել են նաև կանանց և աղջիկների կրթության, մասնագիտական պատրաստման հարցերը: Բնակչության իրավական և ընդհանուր գիտելիք-

ների հարստացման ուղղությամբ առաջարկվել են այնպիսի կրթական ծրագրեր, որոնք նպատակաուղղված են մասնագիտական վերապատրաստմանը, գեոդերային իրազեկության բարձրացմանը և, ի վերջո, երկրի սոցիալ-տնտեսական կյանքին կանանց մասնակցության ապահովմանը:

Կարծում են՝ առավել արդյունավետ կլինի գեոդերային ուսուցման ներդրումը միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգում՝ ուղղված ապագա մասնագետների, քաղաքացիների ինքնագիտակցության ձևավորմանը: Այսպիսի միջոցառումների շարունակականությունը դրականորեն կազդի հատկապես երիտասարդ սերնդի վրա:

Ասոցիացիայի ստեղծման 15-ամյակի առթիվ Ախուրյանի մասնաճյուղում կազմակերպվել է կլոր սեղան-հանդիպում՝ նվիրված կատարած աշխատանքների գնահատմանը, հետագա անելիքներին և ակնկալվող արդյունքներին: Հանդիպմանը ներկա էին տարբեր համայնքների ներկայացուցիչներ, այլ հասարակական կազմակերպությունների նախագահներ, համայնքի ակտիվիստներ և փորձագետներ Ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղից: Միջոցառումն անցավ բարձր մակարդակով, ավարտին Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Ի-գիթյանը համայնքի հինգ ակտիվ կանանց պարգևատրեց պատվոգրերով:

Հուսով են, որ կատարված և կատարվելիք աշխատանքները հետք կթողնեն, և մոտ ապագայում 15 տարվա գործունեության արդյունքներն առավել տեսանելի կլինեն, հատկապես՝ կանանց քաղաքացիական ակտիվության բարձրացման գործում:

Նորաստեղծ մասնաճյուղը քայլ առ քայլ կայանում է:

Աննա Ենգոյան
Ասոցիացիայի Ախուրյանի մասնաճյուղի նախագահ, Ախուրյանի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն

**ՎԵՂՈՒ ԿԱՆԱՆՑ
ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ
ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ**

2011 թ. ապրիլի 30-ին Վեղի քաղաքում տեղի ունեցավ Ասոցիացիայի փոխնախագահ Լիլիթ Չաքարյանի, Վեղու քաղաքապետ Վարուժան Բարսեղյանի, Քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնի ղեկավար Անահիտ Խաչատրյանի հանդիպումը Վեղու կանանց լիդերության դպրոցի 22 շրջանավարտների հետ:

Ողջունելով շրջանավարտներին Լիլիթ Չաքարյանը հորդորեց, որ դպրոցում ստացած գիտելիքները կիրառվեն կյանքում ի նպաստ քաղաքացիական հասարակության կայացման, և հաջողություններ մաղթեց այդ գործում: «Դպրոցի կազմակերպիչները ցանկանում են, որ շրջանավարտները ստացած գիտելիքներով ակտիվորեն մասնակցեն երկրի քաղաքական-հասարակական կյանքին», - ընդգծեց նա:

Ասոցիացիայի փոխնախագահը կարևորեց շրջանավարտների և մասնաճյուղի մշտական փոխադարձ կապի պահպանումը, ինչը երկուստեք օգտակար և արդյունավետ կարող է լինել:

Այնուհետև Լիլիթ Չաքարյանը և Անահիտ Խաչատրյանը շրջանավարտներին հանձնեցին դպրոցն ավարտելու մասին վկայականները:

Վկայականների հանձնմանը մասնակցած քաղաքապետ Վարուժան Բարսեղյանը, շնորհավորելով շրջանավարտներին, մաղթեց նրանց հաջողություններ, առաջընթաց մասնագիտական աշխատանքում և հասարակական կյանքում:

Շրջանավարտներին շնորհավորեցին և հաջողություններ մաղթեցին նաև մասնաճյուղի նախագահ Գրետա Գրիգորյանը և Քաղաքացիական նախաձեռնությունների մարզային կենտրոնի ղեկավար Անահիտ Խաչատրյանը:

Ելույթ ունեցող շրջանավարտներն իրենց խոսքում կարևորեցին դասընթացներում ստացած գիտելիքները և ընդգծեցին պարասմունքների բարձր որակն ու ինտերակտիվ տեխնոլոգիաների արդյունավետությունը:



ԱՍՈՑԻԱՅԻԱՅԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՑԱՆՅՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է. ՆՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆՈՒՄ

2011 թ. ապրիլին Ասոցիացիայի Քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի ղեկավար Անահիտ Ադոյանի նախաձեռնությամբ Բյուրեղավան քաղաքում ստեղծվել է Ասոցիացիայի մասնաճյուղ: Այդ նպատակով անցկացված հանդիպմանը ներկա էր հասարակական գործունեության նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող 22 կին: Անահիտ Ադոյանը ներկայացրեց Ասոցիացիայի

կազմակերպվեց սեմինար «Կանանց մասնակցությունը հասարակության զարգացման գործընթացներին՝ որպես ժողովրդավարացման նախադրյալ» թեմայով:

Փորձագետը՝ Ասոցիացիայի փոխնախագահ, ՀՀ Գ-ԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Չաքարյանը, անցկացրեց պարապմունքներ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտները և գործառույթները», «Գեները որպես սոցիալ-մշակութային հարացույց» և «Կանանց շարժումը XIX դարի վերջին – XX դարի սկզբին. միջազգային փորձը և հայ իրականությունը» թեմաներով:



Պարապմունքները մեծ հետաքրքրություն և աշխույժ քննարկում առաջացրեցին: Լիլիթ Չաքարյանը Ասոցիացիայի օրինակով ցույց տվեց, թե ինչ դեր կարող է ունենալ հասարակական կազմակերպությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Նշեց տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության անհրաժեշտությունը, հատուկ ընդգծեց, որ յուրաքանչյուր մարդ պետք է աշխատի իր վրա, խորանա մասնագիտության մեջ:

առաքելությունը, նպատակները, իրականացրած գործունեությունը: Քննարկումների արդյունքում որոշում կայացվեց ստեղծել Բյուրեղավանի մասնաճյուղ, և ներկա գտնվող կանանցից 20-ը դիմում ներկայացրեցին Ասոցիացիայի շարքերը համալրելու մասին:

Քննարկումը ցույց տվեց, որ սեմինարի մասնակիցները մեծ սպասելիքներ ունեն մասնաճյուղի գործունեությունից, որը նրանց կարող է հնարավորություն տալ տեղեկացված լինելու և մասնակցելու հասարակական գործունեությանը:

Նորաստեղծ մասնաճյուղն ամրապնդելու և նորընտիր անդամներին Ասոցիացիայի գործունեությանն ավելի մանրամասն ծանոթացնելու նպատակով

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում հեղինակներին հողվածները տրամադրելու համար

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն» ծրագրի շրջանակներում «Քաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ

Համարը պատրաստել են
Համարը խմբագրել է
Ձևավորումը՝

Չեմմա Հասրաթյանը, Իրինա Շահինյանը, Գայանե Մերոյանը
Անահիտ Հարությունյանը
Արթուր Բոյախյանի

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Երևան 0002, Սարյան 22
Հեռ. (374 10) 53-68-02,
Ֆաքս (374 10) 53-67-92
Email: awue.armenia@gmail.com

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ»
հրատարակչության տպարանում:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Հեռ. (374 10) 54-49-82, 62-38-63
Էլ.փոստ info@asoghik.am